ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 3, 1952 Общественные науки

ԼՐԱՏՈՒ

ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻՍ, ՆՎԻՐՎԱԾ Ն. Վ. ԳՈԳՈԼԻ ՄԱՀՎԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

Փետրվարի 29-ին և մարտի 1-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի կազմակերպած հոբելյանական գիտական սեսիան, նվիրված ռուս մեծ գրող Ն. Վ. Գոգոլի մահվան 100-ամյակին։ Բացման խոսքով հանդես եկավ պրոֆ. Մ. Մկրյանը, որից հետո լսվեցին հետևյալ զեկուցումները. Ն. Վ. Գոգոլի տիպերի օգտագործումը Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի երկերում (զեկ. ֆիլ. դիտ. թեկնածու Է. Թոփչյան), Ն. Վ. Գոգոլը և հայ գրականությունը (զեկ. ֆիլ. դիտ. թեկնածու Գ. Հովնան), Ն. Վ. Գոգոլի ստեղծագործությունը ռուս ռևոլուցիոն-դեմոկրատների դնահատությամբ (զեկ. պրոֆ. Հ. Մելիքյան), Ն. Վ. Գոգոլը և մեր օրերը (զեկ. ֆիլ. դիտ. թեկնածու Ս. Սարյան)։

Սեսիայում կարդացված զեկուցումների մի մասը կտպագրվի «Տեղեկագրի» առաջիկա համարներում։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Փետրվարի 26 – 28-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Ընդհանուր ժողովը։ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիայի իսկական անդամ Վ. Հ. Համբարձումյանը, բաց անելով ժողովը, ասաց.

Ընկերներ.

Գիտությունների ակադեմիայի Ընդհանուր ժողովի ներկա նստաշրջանը դումարվում է մեր ակադեմիայի 1951 թվականի աշխատանքների արդյունքները ի մի բերելու և քննելու համար։

Կոմունիզմի մեծ կառուցումների իրագործումը պահանջել է սովետական գիտնականներից ակտիվ մասնակցություն ցուցաբերել մի շարք կարևոր գիտա-տեխնիկական հարցերի լուծման մեջ։ Մեր ակադեմիայի մի շարք գիտա-հետազոտական հիմնարկներ հաջող աշխատանք են կատարել այդ ուղղությամբ և զգալի օգնություն են ցույց տվել Ստալինգրադյան ու Կույբիշևյան հիդրոհանգույցների շինարարությանը։

1951 թվականի ընթացքում էլ ավելի մեծացել է Գիտությունների ակադեմիայի դերը Սովետական Հայաստանի արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման գործում։

Սակայն պետք է ասել, որ այնպիսի կարևորագույն խնդիրներում, ինչպիսին են մետալուրգիայի պրոբլեմները արդյունաբերության համար և ցորենի պրոբլեմը գյուղատնտեսության համար, մենք դեռևս հետ ենք մնում կյանքի պահանջներից։ Գյուղատնտեսական գիտությունների բաժանմունքը, ինչպես նաև Տեխնիկական գիտությունների նորակազմ բաժանմունքը պետք է ավելի մոբիլիզացնեն իրենց ուժերն այդ խնդիրները լուծելու համար։

Խոշոր խնդիրներ են դրված այսօր Հասարակական գիտությունների բաժանմունքի առաջ, մանավանդ տնտեսագիտության, լեզվաբանության և պատմության բնագավառներում։

Բիոլոգիական գիտությունների բաժանմունքի հիմնարկներն ավելի արագ պետք է առաջ մղեն Ի. Պ. Պավլովի ուսմունքի զարգացման գործը։

Մեր ամբողջ գիտական աշխատանքում հսկայական է քննադատության և ինքնաքննադատության դերը։